## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը արտասահման կատարած ուղևորությունից վերադարձավ Մայր Աթոռ շաբաթ, հուլիսի 27-ին:

Նորին Սրբությունը Իր այս ուղևորության ընթացքին այցելեց հայ եկեղեցական թեմերն ու համայնքները՝ Ավստրիայում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Կանադայում, Արգենտինայում, Ուրուգվայում, Բրազիլիայում և Ֆրանսիայում:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին՝ գերաշնորհ տ. Կոմիտաս եպիսկոպոսը՝ առաջնորդ Վրաստանի թեմի, գերաշնորհ տ. Տիրայր եպիսկոպոսը՝ առաջնորդ Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի, հոգեշնորհ տ. Ներսես ծ. վարդապետ Պոզապալյանը՝ տեսուչ հոգևոր ճեմարանի, և պրն. Արթուն Հատիտյանը՝ խմբագիր «Էջմիածին» ամսագրի:

**ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ**

30 հուլիս 1968
Ս. Էջմիածին

